ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/10» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչիկյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Առուշանյանը, Գ. Մեհրաբյանը, Հ. Ռամազյանը, Ա. Գևորգյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. **Բաց մրցույթի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների մասնակցության իրավունքի և որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին**

(Ա. Խաչիկյան)

1. **Փաստաթղթերի գնահատման՝**

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.

-օրը՝ 24.07.2019թ.

-ժամը՝ 15:00

Ընդունել ի գիտություն, որ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի տվյալների ճշտման մասին հարցում է կատարելվել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե, որի տրամադրված եզրակացության համաձայն՝ «Գոլդ Ֆլուր» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած հայտարարությունը համարվել է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Ընդունել ի գիտություն, որ որակավորման պահանջներին իրեն համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	«Գոլդ Ֆլուր» ՍՊԸ

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526 որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 46-րդ կետը, «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովը արձանագրում է, որ գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Գորդ-Ֆլուր» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող «Կենցաղային թափոնների կոնտեյներների» տեխնիկական բնութագրի ամբողջական նկարագրում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջներին, մասնավորապես.

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է .

Ծավալը	1,0 – 1,1 մ3
Երկարությունը մմ	ոչ պակաս 1375
Խորությունը, մմ	ոչ պակաս 1075
Բարձրությունը, մմ	ոչ պակաս 1360
Քաշը, կգ	ոչ պակաս 50

Անիվների տրամագիծը՝ 200մմ

Մինչդեռ, «Գորդ-Ֆլուր» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող «Կենցաղային թափոնների կոնտեյներների» տեխնիկական բնութագրի ամբողջական նկարագրով սահմանվել է

Ծավալը	≥ 1000լ
Երկարությունը մմ	համաձայն EN 840
Խորությունը, մմ	համաձայն EN 840
Բարձրությունը, մմ	համաձայն EN 840
Քաշը, կգ	≥ 51
Անիվների տրամագիծը՝	համաձայն EN 840

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է .

- Աղբարկղը կայուն է ուլտրամանուշակագույն ճառագայթների, ցրտի և տաքի նկատմամբ:
- Երաշխիք, ամիս
  - անիվներ 12
  - պլաստմասե պատյան 12

Մինչդեռ, «Գորդ-Ֆլուր» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող «Կենցաղային թափոնների կոնտեյներների» տեխնիկական բնութագրի ամբողջական նկարագրով նշված դրույթները բացակայում են:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ–0

4. Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով կարգի 47-րդ կետի դրույթներով առաջարկում է հանձնաժողովի քարտուղարին նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցել «Գոլդ Ֆլուր» ՍՊԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

   Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ–0

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստտ հրավիրել «Գոլդ Ֆլուր» ՍՊԸ-ի կողմից նշված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ փաստաթղթերը սահմանված ժամկետում տրամադրելու հաջորդ օրը:

   Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ–0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա. Խաչիկյան
Անդամներ՝		Վ. Առուշանյան
		Գ. Մեհրաբյան
		Հ. Ռամազյան
		Ա. Գևորգյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան